

ԽՈՐԷՆ ՆԱՐԲԷԻ ՆՍՄԱԿՆԵՐԸ

Վսեմափայլ և Ազգասէր իշխան

Մինչև ցայսօր ակնկալեալ մնայի անձկանօք ցանկալի պատասխանույ թղթոց իմոց ի ձերդ Մեծութենէ. այլ ըստ ձախողակ բաղդիս՝ ահա վրէպ գտայ ի յուսոյս ակնկալութենէ և զայս նուագ, և վերջին իմ գիր և քերթուած ոչ բարեբաստագոյն քան զնախընթաց թուղթս իմ գտան և նամականի.... Գիրկս ապա ածեալ համբերութեան՝ և ընծայաբեր ևս փութամ լինել, իբրու թէ կաշառակուրծ զգրիչ ձեր առնել զի փութագոյնս լիցի յիմ պատասխանիս:

Եւ ընծայն իմ ոչ մեծ ինչ է և ոչ ծանրագին, բայց և այնպէս՝ յոյս մեծ ունիմ զի ընդունելութեան ի ձերդ հանդիպեսցի Մեծութենէ, որ զի բուն իսկ վասն սանուց ձերոց և ի պէտս թատեր Ուսումնարանին ձերոյ գրեցաւ փանաքիս այս Ողբերգութիւն Արշակայ երկրորդի:

Ճաւեաց մեզ ընդ այն զի յաւուր անդ հանդիսի Ողբերգութեան պակասէր մեզ ձերդ ցանկալի ներկայութիւն՝ որ քաջալերութիւն մեծ ազդէր անշուշտ ի սիրտս աշակերտացն, և ուրախութիւն՝ ի սիրտս մեր առհասարակ: Բայց այնու միութարիմք զի յամարանի ի պատուելն մեր ըղձալի այցելութեամբ ձերով, մարթ է մեզ երկրորդել առաջի ձերումդ Մեծութեան զթատերական զայս հանդէս, յորմէ լիցի ձեզ իմաստասիրել զսանից ձերոց մեծաքայլ յառաջադիմութիւն, ընդ որ յապուշ կրթեցան եւ ներքինք և արտաքինք:

Ի Պոլսոյ ընկալայ պատասխանիս ի տեսրց անտի ազնուականաց որոց գրեցէք աստուստ պատասխանիս: Աղաչեն զիս առաջի առնել ձեզ զիւրեանց մեծարանս:

Եւ քոյրն իմ Աննեկա, զցանկալի լրոց առողջութեան ձերոյ հարցանելով, աղերսելով աղերսէ զի գրեցից ձեզ աղաչելով ընդունել զխոնարհ և զակնածու մեծարանս աղախնոյ ձերումդ մեծութեան:

Ընկալարուք աղաչեմ ընդ նմին և զիմ կարօտագին ող-
ջոյնս և բարեմաղթութիւնս, և յարատե լիւրուք և անսպառ
յուրակութեանս. զի ի ձերումդ լիցի ուրախանալ և մեզ՝ սիրո-
ղացս և սիրելեաց ձերումդ Վսեմափայլ Տէրութեան, որում եմս

Աղօթարար ծառայ
Սորէն վարդապետ:

Ի Թէոդոսիա 8 Մարտ 1861.

Թէոդոսիա, 9 Դեկտեմբեր 1861.

Վսեմափայլ իշխան

Ահաւասիկ հուսկ ուրեմն հասաք ի վայր ընակութեան
մերոյ. այլ որքանի՜ նեղութեանց հարկ եղև մեզ տանել՝ մինչև
ստաք ի հանգիստ: Զի թող զվիշտս մտայոյդ տաճնապանաց
վասն անցադրիս, զորմէ քաջ իսկ զիտէք, ինչ ևս ուրակու-
թեամբ մեծաւ մտանէի ի շոգենաւ, կարծելով զիս ազատեալ
ի նեղութեանց վտարանդի և աստանդական կենաց, չգիտէի
եթէ երազում նեղութեամբ պարտ է մտանել յայն հանգիստս...

Յանցանել իմ անդ ի Կոստանդնուպոլսոյ յՕտէսսա՝ զհա-
նապարհ 30 ժամուց հազիւ կարացաք ի հինգ աւուրս կատա-
րել, գոհութիւնս անբաւ մատուցանելով ողորմութեանց բար-
ձրելոյն զի եհան ազատեաց զմեզ յանշուշտ մահուանէ որ
առաջի մեզ կայր: Յանդիման աչաց մերոց՝ նաւք վեց ընկղիւ-
ցան ի խորս ծովու. և մեզ զնոյն կորուստ սպառնայր ծով, այլ
Աստուած խնայեաց ի մեզ և զթացաւ: Ի հինգ աւուրց միջի և
ոչ իսկ զպատառ մի հացի կարացի ես դնել ի բերան:

Որ զինչ և իցէ՝ ահաւասիկ էանց ամենայն. և իմ հասեալ
աստ ի գիշերի կիւրակէիս՝ անդէն ի վաղուեան առաւօտու
չոգայ յՈւսումնարանն և ետու դասս երիս՝ երից այլ և այլ
դասատանց, քանզի շատ իսկ կարծեմ եղև ինձ հանգչել ընդ
ամիսս չորս. բայց հանգիստ՝ իմա ինձ ի դասատուութենէ և եթ
քանզի այլոքն ամենայնիւ շատ իսկ երերեալ տատանեցաք ընդ
ազգայինս մեր յերեսաց ահագին և ազգաւեր խռովութեանն
յարուցելոյ ի Կոստանդնուպոլիս, որ փոքր մի ևս և ի կորուստ
մատնէր զազգ մեր՝ եթէ չէր Տեառն գթացեալ ի մեզ բարեխօ-
սութեամբ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի:

Յայնպիսով աղետալից ժամանակի՝ որպէս և մեր իսկ
պարտք պահանջէին, բազում և առատ քարոզութեամբք ջանա-
ցաք զմիտս և զսիրտ ժողովրդեանն հարդարեալ և հրաւիրել
զնոսս ի սէր և ի միաբանութիւն: Եւ Աստուած օրհնեաց զա-

նրա մեր և զեռանդ, և քաղցր և ախորժելի ընծայեցող զբանն ի լսելիս ժողովրդեանն, որ և առաւել յոյժ քան զմեր արժանիս պատուեաց զմեզ:

Ի թղթի ձերում որ առ գերապատիւ Առաջնորդն՝ գրեալ է ձեր թէ մի արդեօք Խորէն վարդապետն հաւանեալ իցէ մնալ ի Պօլիս, ևն: Արդարեւ աղաչել աղաչեցին զմեզ յոյժ հայրենակիցք մեր, և բազմադիմի հնարս հնարեցան զի կացցուք մնասցուք անդանօր, այլ մեր զդէմ կացեալ խոստմանց նոցա՝ հրաժեշտ տուաք միշտ ի բազմապատիկ խնդրանաց նոցա և ի մեծաշուք պատուոց և պաշտօնանց՝ զոր առնէին մեզ առաջի, սիրելով աստանօր յաւէտ վաստակել, գէթ ցորչափ կարեմն գոլ պիտանի և հարկաւոր աստ: Յուսամ զի դայցէ ժամանակ յորում ոչ գեր. Առաջնորդն և ոչ ուսումնարանն ունիցի պէտս տկար օգնութեան իմոյ, յայնժամ և ես ոչ այնպէս անլսող եղէց արդեօք աղաչանաց հայրենակցացս իմոց որ այդք են ի Պօլիս: Բանդի և նոցա կարօտութիւն մեծ է յոյժ ժրջան մշակաց... հունձք արդարեւ բազում են և մշակք ոչ եթէ սակաւք (ըստ Տեառն բանի) այլ և ամենեւին իսկ չգոն...:

Յաւեաց ինձ մեծապէս զի չգտայ աստ առաջիկայ՝ ի գալստեան ձերում այսր: Այլ խնդացի յոյժ յոյժ ընդ այցելութիւն կայսեր յԱստուծոյն, և մանաւանդ ընդ բանս մեծարանցն որ առ ձերդ ուղղեալ տէրութիւն: Պատմեցի զայդ առամենեսին ի Պօլիս, և քաբայք մեր զարմացան մեծապէս ընդ ընտանութիւն ինքնակալին ընդ ձեզ: Յուցի մեծամեծաց և փոքունց առհասարակ զպատկեր ձեր՝ զոր ես լուսով (Ֆօթօկրաֆիայիւ) հանի. ամենեքին իսկ տենչացան և խնդրեցին ունել առ իւրեանս զմի մի օրինակ պատկերիդ, իբրեւ զկենդանագիր հայրենապանձ իշխանի ազգիս և բարերարի, ևն:

Բոյր իմ ես ընկալաւ ուրախութեամբ մեծաւ զգեղեցիկ մատանին, և շնորհակալութիւնս բազումս նուիրէ առ ձերդ մեծութիւն իմով ձեռամբ: Նոյնպէս և ծերունի մայրն իմ զօրհանապազ աղօթս ջերմեռանդս մատուցանէ առ Աստուած վասն ձեր, զի շնորհեացէ ձեզ Տէր կեանս երկարս և երջանիկս:

Զնոյն ինչ և ես մաղթեմ ի բոլոր սրտէ, մանաւանդ ի մերձեանալ նորոյ ամին, հայցելով յամենողորմն Աստուծոյ զի լցուցէ զձեզ զօրութեամբ և մխիթարութեամբ, որպէս զի ի գլուխ հանեալ յառաջիկայ նոր ամին զմեծագործն շինուած, թողլիք յազգաց ազգս Անուն և Օրինակ յաւիտենական, ի զարմացումն բովանդակ աշխարհի:

Ո՛ղջ լերուք հի մեր Պարծանք և փառք և Ուրախութիւն,
 «գի՛ ձեօք և մեք պարծեսցուք, փառաւորեսցուք և ուրա-
 խասցուք: Խորէն վարդապետ

Քէտղասիա, 17 Մարտ, 1862.

Վսեմափայլ իշխանիդ

Ողջոյն և սէր ճշմարիտ:

Ի ցանկալի թղթոց անտի ձերոց որ առ գերապատիւ մերս
 Սրբազան՝ իմիտ առեալ զպատուական ձերդ առողջութիւն՝
 մեծապէս խնդամք, և ընկալեալ ընդ նմին և զանմոռաց ող-
 ջոյնս սիրոյ ձերոյ՝ մխիթարութեամբ մեծաւ խնուն սիրտք մեր
 և ոգի՝ որ զի ի բազմախոռն գունակ գունակ զբազմունս և ի
 հոգս անդ մտացդ՝ ոչ անտես և զմերոյս նուաստութեան թո-
 ղուք զդոյզն յիշատակաւ:

Ապաքէն անմոռաց է և ի մերս մասց և ի սրտէ՝ Մե-
 ծութեանդ ձերում յիշատակ, այլ զի հոգք Ուսումնարանիս և
 Տպագրատան՝ զօր ամենայն զբաղեալ ունին՝ զմեզ, վասն որոյ
 և չկարացաք ցարդ երկրորդ գրով յայտ առնել ձեզ զշնորհա-
 կալիս մեր յընդունելութիւն ցանկալի պատասխանոյ առաջին
 թղթոյ մերոյ՝ զոր գրեալն էաք ի դարձի անդ մերում յափանց
 անտի բիւզանդացւոց հրաշակերտացն:

Մանաւանդ զի ի վերայ սովորական մերոցս զբաղանաց
 յաւելեալ և յօրինուած կատակերգութեան միոյ, ապա յետ
 այնր՝ և աշխատութիւն ոչ թեթեւ ուսուցանել զայն մերոցս
 աշակերտաց, անկարող զմեզ արարին ի թղթելոյ առ ձեզ:

Արդ զի՝ Աստուծոյ շնորհելով, մեծաւ յաջողութեամբ
 հանդիսացուցին զայն աշակերտք մեր ի 14 ամսոյս առաջի
 ժողովրդեան, և ի հասարակաց ամենեցուն խնդրանաց՝ դար-
 ձեալ և երկրորդ անգամ յերէկն ի գիշերի խաղացին դարձեալ
 զնոյն մերս կատակերգութիւն՝ առաւելագոյն յաջողութեամբ և
 ծափածայն գովութեամբք մեծի և փոքու, ահա և ես փութամ
 այսօր աւետել ձեզ զայդ, ի խնդութիւն սրտի Հօր Ուսումնա-
 րանիս:

Ընդ նմին առաքել համարձակիմ և առ ձերդ Մեծութիւն
 օրինակ մի կատակերգութենէս յընծայ և ի յիշատակ: Զոր
 և աղաչեմ ընթեռնուլ և յայտնել մեզ զձերդ կարծիս և զգա-
 տաստան, ընդ որ լիցուք շնորհակալ մեծապէս, որպէս և յըն-
 դունելութիւն գուհնաքեայ այսր մերոյս ընծայի, որով լիցուք
 միշտ Մեծապատիւ իշխանիդ երախտապարտ ծառայ

Խորէն վարդապետ